

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ.

### 1. «ՆՈՐ-ՊԱՐՈՑ» ՇԱՐԱՔԱՔԵՐ

Այս տարի մեր դպրոցական կեանքում աչքի ընկնող դէպքերից մէկն է «Նոր-դպրոց»ի շաբաթաթերթ գաւառայլը: Սա մի հանգամանք է, որի վրայից անուշադիր չը պէտք է անցնել: Ինչ դոյն պէտք է ունենայ մանկավարժական ամսագիրը և ինչ շաբաթաթերթը: Ամսագիրը աւելի գիտական բնոյթով պիտի լինի, տեսական, գործնական, հոգեբանական և այլ մանկավարժութեանը կապուկից խնդիրներ պէտք է մասնագիտորէն, գիտական ոգով լուսարանուին, պարզուին ամսագրի մէջ ուսուցչական աշխարհի համար: Շաբաթաթերթը անկարող է մեծ, մանրամասն, զուտ գիտական յօդուածներ հարկաւոր չափերով հիւրընկալել, որովհետեւ նա ոչ աեղ ունի և ոչ էլ հնարաւորութիւն, բացի այդ շաբաթաթերթը աւելի ընթացիկ հարցերին պիտի բաւարարէ, դպրոցական առօրեայ կեանքին հետեւէ, մի խօսքով դպրոցական «քաղաքականութեան» կարիքին դահացում տայ:

Այժմ գանք մեր հայ կեանքին և տեսնենք, որ տիպի հրատարակութիւնը աւելի համապատասխան է ուսուցչութեան կարիքներին: Անուրանալի փաստ է, որ մեր ուսուցչութիւնը շատ է անպատրաստ իւր կոչման համար, գաղափար չունի հոգեբանական, բարոյադիտական տարրական հարցերի մասին, չի ուսումնասիրել մանկավարժական տեսական-գործնական խնդիրները և նա կարիք ունի լուրջ մասնագիտական եղանակով իրեն կոչմանը վերաբերող խնդիրների լուսաբանման: Մեր ներկայ ուսուցչութեան ամենամեծ պակասաւոր կողմը հէնց այդ է, նախկին տարիների «Նոր դպրոց»ը, պէտք է խոստովանել, որ այս ուղղութեամբ հնարաւոր կարելին իրագործել է: Նա այն

չափով գիտական—մասնագիտական էր, որքան այդ թոյլ էին տալիս մեր ներկայ մասնագէտ գրողների ուժերի կարողութեան սահմանները։ Սակայն ինչ կոչում է նա յանձն առնում իր վրայ այժմ։

Շաբաթաթերթը պէտք է ընթացիկ կեանքին հետևէ, առօրեայ դպրոցական խնդիրները քննէ, նա էլ չի կարող «մեծ յօդուածներ» տպել, ինչպէս այդ արդէն յայտարարել է «նոր դպրոց»ի խմբագրութիւնը։ Սակայն այս դրութեամբ խնդիրը աւելի բարւոքուեց։ Կէ որ գիտական յօդուածների պահանջը, սովոր մնում է հրապարակում։ Մեր դպրոցական կեանքի առօրեային շատ մեծ չափերով քննութեան են արժանացնում մեր հայ օրաթերթերը։ Բացէք որ և է օրագրի մի շաբաթուայ համարներ և կը տեսնէք, որ ոչ մի խնդիր այնքան հոգս, ուշադրութիւն, քննութիւն, լուսաբանութիւն չի կենդրոնացնում իր վրայ, ինչպէս դպրոցականը։ Մեր դպրոցների մէջ յառաջացած խնդիրներից և ոչ մէկը մեր օրաթերթերի ուշադրութիւնից չի վրիպում։ Ես չեմ ճանաչում մի ժողովրդի օրագրութիւն, որը այնքան սանտիմենտալ ուշադրութիւն ունենար դէպի դպրոցական խնդիրը։ Ի հարկէ, ցանկալի է, որ այդ խնդիրները լուսաբանուին ուսուցչական մի օրգանի միջոցաւ, որը թէ ուսուցչութեան և թէ հասարակութեան համար մեծ հետաքրքրութիւն կարող է ներկայացնել։ Սակայն խնդիրը այժմ այն է, թէ կարելի է զուտ գիտականը զոհել առօրեայի համար, արդեօք մեր դպրոցական կեանքը այնքան զարգացել, այնքան արագացել է, որ նրա մէջ յառաջացած հարցերի լուսաբանման համար պաշտօնական օրգանի պաշտօնական կտրծիքը մի ամսով ուշացնելը կարող է փաստակար և վտանգաւոր լինել ուսուցչութեան շահերի համար։ Ես այդ վտանգը դեռ չեմ նկատել, ուստի և այն կարծիքին եմ, որ ամսագրի կտրծիքը այժմ, ներկայ հանգամանքներում աւելի մեծ է։

Պէտք է մատնանշել այն ուրախալի հանգամանքը, որ «նոր դպրոցը» առ այժմ դեռ իբրև երկշաբաթաթերթ է լոյս տեսնում, որով հնարաւորութիւն կայ մէկ-մէկ մաս-

նագիտական յօդուածներ տալ և միւս կողմից ընթացիկ կեանքին աւելի մօտ մնալ: Մեր ցանկութիւնը կը լինէր, որ «Նոր դպրոցը» հէնց այդպէս էլ մնար և մի աստիճան էլ չիջնէր դէպի շաքաթաթերթի վիճակը:

## 2. Նոր-դպրոցը եւ մանկավարժական մուզէյը.

Արարատի ընթերցողներին արդէն յայտնի է տիկին Քանանեանի նուիրաբերութիւնը՝ մանկավարժական մի մուզէյ հիմնելու, յայտնի է նոյնպէս այդ մուզէյի ծրագիրը, որը բաւական լայն ու բազմակողմանի է գծած, որպէս զի մուզէյը միմիայն ձեւարանի շահերին չը ծառայէ, այլ ամբողջ հայ ուսուցչութեան և դպրոցների: Այս բոլորը յայտնի է նաև Նոր-դպրոցի խմբագրութեան, սակայն մինչև օրս խմբագրութիւնը զլացաւ իր կարծիքը յայտնել այդ հաստատութեան մասին: Նոյն իսկ ոչ մի համակրական քաջալերական խօսք այդ ձեռնարկութեան համար: Նա իր անցեալ երկու համարներում միմիայն լուրեր է յայտնում և այնքան անտարբեր, կարծէք, այդ գործը պէտք է պտղաբեր լինի Աֆրիկայի խորքերի դպրոցների համար:

Մեր օրագրութիւնը այդ հաստատութեան մասին իր կարծիքը յայտնեց, այն ինչ ուսուցչութեան պաշտօնական օրգանը, որը շաքաթաթերթ դարձաւ հայ ուսուցչութեան դպրոցական-մանկավարժական կեանքը աւելի շուտով քննութիւն առած նեցկայացնելու, ամիսներով լուռ է մնում մեր կեանքում այսքան մի եղակի և ապագայ խօստացող հաստատութեան մասին իր կարծիքը յայտնել, իր տեսակէտները պարզել ծրագրի և ապագայ գործունէութեան մասին:

Գ. ԼՂԻԿԵԱՆ.

